ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 506-Ա

ԱՍՏՂԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 11-րդ կետի գ-ենթակետով, ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին որոշմամբ և հիմք ընդունելով սույն կարգի 2-րդ դրույթը սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման 8-րդ կետը,Աստղիկ Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայր 12-րդ փող, թիվ 2 հասցեում գտնվող 05-074-0021-0017 կադաստրային ծածկագրով հողամասում 2015 թվականին ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, շինությունները կառուցված են իրեն հատկացված հողամասում.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Աստղիկ Կիրակոսյանի կողմից սեփականության իրավունքով պատկանող Շողակաթ բնակավայրի բնակելի կառուցապատման 0.19111 հա հողամասում 2015 թվականին ինքնակամ /2023NF7WMN/ կառուցված մեկ հարկանի 38,51 քմ ներքին և 49.75 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը, 90.63 քմ ներքին և 108.03 քմ արտաքին մակերեսով քոթեջը,48.44 քմ մակերեսով բաց պատշգամբը /կամ աստիճանահարթակը/, 28.2 քմ մակերեսով հարթակը,18.54 քմ մակերեսով ծածկը և 83.94 քմ մակերեսով ծածկը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված շինությունների արժեքը կազմում է 346.500 /երեք հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, վճարել 900185061158 հաշվի համարին՝ համարել Աստղիկ Կիրակոսյանի սեփականություն:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար **ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

2025 թ. հուլիսի 11
ք.Ճամբարակ